տին եւ սաստկացուցեալ զմարտն մղեցին զնոսա յետս, մինչեւ ապաստանել նոցա 'ի պատնէշս բանակի իւրեանց։ Սակայն նախայարձակ զօրք Լատինաց կալեալ էին զկեդրոն բանակին. 'ի հասանել դուժկանաց առ Սալահատտին՝ ամապարեաց դառնալ յետս, զի մի փակեսցեն զճանապարհ իւր, և հասեալ անդ ցրուեաց զնոսա։ Ցայսմ արիւնահեղ պատերազմիս անկան բազումք յերկուց կողմանց, գազանք եւ թռչունք առանձին բանակ հարեալ էին 'ի դաշտի անդ, ասեն պատմիչք Արաբացւոց։ Եհաս ձմեռն, և Սուլթանն խօթացեալ մեկնեցաւ 'ի լեառն Խուրոպ, և Հիսամէտտին Եգիպտական զօրօք պահապան եկաց քաղաքին։ Ի մեկնիլ և 'ի տեղի տալ աւուրց ձմերայնոյ և 'ի հասանիլ եղանակի գարնան, եհաս Մելիք Ասիլ բազմութեամբ զօրաց յԵգիպտոսէ, և այլ Իշխանք Ջոկատիւ իւրեանց, եւ Սուլթանն ապաքինեալ 'ի ցաւոց, էջ 'ի լեռնէ անտի։

Սակայն Լատինք առաւել եւս ամրացուցեալ էին զբանակն իւրեանց, մինչեւ երեւիլ առ քաղաքին այլ իմն նոր քաղաք։ Եւ դարձեալ սկիզբն եղեւ մարտին. յարձակիլ Լատինաց 'ի վերայ Պողոմայիդայ, այլազգիք դիմէին 'ի վերայ բանակի եւ պատնէշաց նոցին, և այս կրկնակի պաշարումն տեւեաց բովանդակ ամ մի, և դաշտն ասպարէզ մշանջենաւոր մարտի։ Սալահատտին այրեաց զամրութիւնս եւ զպատնէշս նոցա, եւ թէպէտ եցոյց քաջութիւն մեծ, այլ ոչ կարաց ազատել զբերդն, զի Լատինք դային և յաճախէին անդ եւ ընուին զթիւ անկելոց։ Լուր գալստեան կայսեր Ալմանիոյ առաւել դառնացոյց զսիրտ Սալահատտինի, և արկ զնա 'ի տարակուսանս մեծ. վերստին գրեաց առ Խալիֆայն Պաղդատի և խնդրեաց օգնութիւն 'ի նմանէ. «Քրիստոնեայք, ասէ, առաւել են քան զալիս ծովու, առատ է սերմն քան զհունձն, որքան քշտեսցես զոստս ծառոց այնքան շառաւիղս արձակէ, բանակ նոցա անմատչելի, զօրք մեր լքեալ և տարակուսեալ»։ Եւ այլ սոցին նման բանք երկար, այլ Սուլթանն չեգիտ 'ի նմանէ գոնէ բանս սիրտանաց։ Գրեաց առ կայսրն Յունաց և առ Սուլթանն Իկոնիոյ. զառաջինն չեզոքացոյց, և զերկրորդն առ իւր դաշնակից. զի սա և Սելճուգեանք առիթ լեալ էին